ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽՈՅԱՆ ՎԱՉԳԵՆ ՎԱՀԱՆԻ

ՎԱՆԱՆԴԻ (ԿԱՐՍԻ) ԵՎ ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1920-1921 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարուքյան Արմեն Ցոլակի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ալեքսանյան Կարինե Վանիչկայի

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. սեպտեմբերի 20-ին ժամը 13^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳ կոմիտեի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. հունիսի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, Հայկական հարցի լուծման արդի փուլում սույն թեմայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է թուրքական պետության կողմից հայերի ցեղասպանության հանցավոր քաղաքականության Արևելյան Հայաստանում շարունակականությունը մատնանշելու հանգամանքով:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև հայ ժողովրդի առջև ծառացած արդի մարտահրավերներով, մասնավորապես 2020 թ. աշնանը Արցախի դեմ Թուրքիայի հովանավորությամբ, Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմով և 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի զինված ուժերի ռազմական գործողություններով: Պատերազմն ուղղված էր Արցախի բնիկ հայ բնակչության ինքնորոշման և սեփական հայրենիքում արժանապատիվ ապրելու իրավունքի դեմ: Արցախահայության դեմ Ադրբեջանն իրագործեց բազմաթիվ հանցագործություններ, որոնք իրենցից ներկայացնում են՝ մարդու կյանքի իրավունքի կոպտագույն խախտումներ, ֆիզիկական և հոգեկան առողջությանը հասցված ծանր հարվածներ, բնակչության նկատմամբ դաժան վերաբերմունքի և խոշտանգման, նրանց սեփականության և մշակութային ժառանգության վնասման դեպքեր: Միջազգային իրավունքի նորմերի տեսակետից ցեղասպանության հանցագործության հատկանիշներին համապատասխանող Ադրբեջանի հանցավոր գործողությունների հետևանքով թիրախավորվեցին և հրետակոծվեցին քաղաքացիական բնակելի տարածքներ և ենթակառուցվածքներ, գերեվարվեցին ինչպես զինվորականներ, այնպես էլ ռազմական գործողությունների հետ կապ չունեցող քաղաքացիական անձինք: Զոհերի մեջ մեծ թիվ էին կազմում նաև տարեց անձինք, ովքեր չէին լքել իրենց բնակավայրերը, որոնց խոշտանգել կամ գլխատել էին: Ադրբեջանական իշխանությունների շարունակական և հետևողական էթնիկ զտումների քաղաքականության հետևանքով Արցախը հայաթափվեց: Հարկ է նշել նաև 2022 թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրագործված լայնամասշտաբ ռազմական գործողությունները: Ադրբեջանի նախագահն անթաքույց հայտարարում է, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանը, Սյունիքը և Գեղարքունիքը Ադրբեջանի «պատմական հողերն» են: Ադրբեջանը առաջնահերթ նպատակ է հռչակել նաև այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» տրամադրումը, որով Հայաստանի Սյունիքի մարզի տարածքով Արցախի բռնազավթված տարածքները պիտի կապվեն Նախիջևանին: Ռազմական գործողությունների հետևանքով հայկական կողմն ունեցավ մարդկային և տարածքային կորուստներ, ռմբակոծվեցին մի շարք բնակավայրեր:

Ուշագրավ է, որ ադրբեջանական բանակի զինվորականների համազգեստի թևկապին պատկերված էին երկու երկրների՝ ոչ միայն Ադրբեջանի, այլև Թուրքիայի դրոշները, ինչպես նաև Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշայի պատկերը, շուրջը «Մի՛ փախիր հայ,

դու կմեռնես միայն ուժասպառ» թուրքերեն գրությունով և վերևի հատվածում ագուցված աստղի և կիսալուսնի պատկերով:

Թուրք-ադրբեջանական համաթուրքական քաղաքականության դրսևորում էր 2021 թ. հունիսի 15-ին ստորագրված «Շուշիի հռչակագիրը», որի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ պաշտոնական մեկնաբանությամբ, որտեղ ասվում էր, որ թեև թուրք-ադրբեջանական հռչակագրում առանձին կետով նշվում է, որ այդ փաստաթուղթն ուղղված չէ երրորդ կողմի դեմ, այնուհանդերձ, դրա ողջ բովանդակությունը թիրախավորում է հայ ժողովրդին: Նույնքան մտահոգիչ է երկու պետությունների պայմանավորվածությունը՝ պայքարելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ[1]:

Համաթուրքական բնույթ ունեցող «Շուշիի հռչակագրի» ընդունումից երկու տարի անց Ադրբեջանն իրագործեց Արցախի էթնիկ զտման հանցավոր քաղաքականությունը: Հայ ժողովրդի համար ծանրագույն այս ժամանակաշրջանը նման է 1920 թ. տեղի ունեցած իրադարձություններին, որոնց ընթացքում հայ ժողովուրդը հայրենազրկվեց և կորցրեց պատմական հայրենիքի մի մասը:

Ատենախոսության գիտական նորույթը: Կարսի նահանգի հայաթափումը, թուրքական նոր կոտորածները, հայ բնակչության հետապնդումները և բռնագաղթը հայ պատմագիտության մեջ դեռևս ամբողջական և համակողմանի գիտական ուսումնասիրության առարկա չեն դարձել: Հայ պատմագիտությունը 1920-1921 թթ. Կարսում տեղի ունեցած իրադարձություններին անդրադարձել է գլխավորապես թուրք-հայկական պատերազմի համատեքստում: Հայ պատմաբանները վերլուծության են ենթարկել մասնավորապես Կարսի անկման պատճառները, այդ պահին եղած ռազմաքաղաքական խնդիրները, մինչդեռ բնակչության կոտորածների ամբողջական պատկերի վերակազմությունը դուրս է մնացել նրանց ուշադրությունից: Այս ուսումնասիրությունը որոշակիորեն լրացնում է այդ բացը: Շիրակի նահանգի 1920 թ. կոտորածները նույնպես համակողմանիորեն չեն ուսումնասիրվել, առավելապես ուսումնասիրության կարիք ունեն Ղարաքիլիսայի գավառի կոտորածները:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Աշխատանքի արդյունքները, որպես պատմաիրավական հիմնավորումներ կարող են օգտագործվել Հայկական հարցի լուծման արդի փուլում, արդարության հասնելու ճանապարհին՝ Հայաստանի Հանրապետության համար որպես լրացուցիչ փաստարկներ ծառայել, շեշտադրելով արևելահայության կոտորածները, որպես Թուրքիայի կողմից իրականացվող Հայոց ցեղասպանության հետևողական քաղաքականության շարունակականություն: Ուսումնասիրությունը կարող է կիրառվել նաև «Հայոց պատմության» դասագրքերի նորագույն շրջանի՝ «1920 թ. թուրք-հայկական պատերազմը» ծրագրային թեմայի վերամշակման, խմբագրական աշխատանքների ժամանակ:

---

[1] ՀՀ ԱԳՆ մեկնաբանությունը Թուրքիայի և Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրված հռչակագրի առնչությամբ, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/06/17/mfa_statement_on_the_decl/10995, դիտվել է 30.10.2022:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության նպատակն է հետազոտել ու ներկայացնել թուրքական բանակի իրագործած զանգվածային հանցագործություններն Արևելյան Հայաստանում՝ Վանանդի (Կարսի) և Շիրակի նահանգներում 1920-1921 թթ.: Ուսումնասիրության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Կարսի մարզի տարածք հայ բնակչության վերադարձի գործընթացը 1919-1920 թթ.:
- Հետազոտել Կարսի անկումից հետո թուրքական բանակի կողմից քաղաքի և նրա շրջակայքի հայ բնակչության կոտորածները:
- Ուսումնասիրել թուրքական բանակի հարձակման հետևանքով Վանանդի նահանգի հայաթափումը 1920-1921 թթ.:
- Քննության առնել թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գավառում իրագործված կոտորածները 1920-1921 թթ.:
- Ներկայացնել թուրքական բանակի կողմից կոտորածների իրագործումը Ղարաքիլիսայի գավառի տարածքում 1920-1921 թթ.:
- 1920-1921 թթ. թուրքական բանակի կողմից Վանանդի և Շիրակի նահանգներում կազմակերպված կոտորածները քննարկել Հայոց ցեղասպանության շարունակականության համատեքստում:
- Համեմատական վերլուծություն կատարել 1920-1921 թթ. թուրքական բանակի կողմից Վանանդի և Շիրակի նահանգներում իրականացված կոտորածների և Մեծ եղեռնի միջև՝ վեր հանելով դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության ժամանակագրական շրջանը: Ատենախոսության ժամանակագրական շրջանը ներառում է 1920-1921 թթ., թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածը: Միաժամանակ զուգահեռ համեմատություններ են կատարվել դեպի Արևելյան Հայաստան 1918 թ. օսմանյան բանակի արշավանքների և 1920 թ. քեմալական արշավանքների միջև: Պետք է նշել, որ թեման ձևակերպելիս հաշվի ենք առել ժամանակագրական առումով մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքների վարչատարածքային փոփոխություններին: Այսպես օրինակ՝ 1920 թ. մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության տարածքը ենթարկվել էր նոր վարչական բաժանման՝ Վանանդի, Շիրակի, Արարատյան և Սյունյաց նահանգների[2]: Հետևաբար թուրքական բանակի ներխուժման և լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում (1920 թ. սեպտեմբերի 28-ից մինչև նույն թվականի նոյեմբերի 18-ը) և հետո Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումից մինչև Հայաստանի խորհրդայնացումն (1920 թ. նոյեմբերի 29-դեկտեմբերի 2) ընկած ժամանակահատվածում վարչատարածքային տվյալ բաժանումը խնդրո առարկա թեմայի տեսակետից արդիական էր:

[2] Տե՛ս «Հայաստանի նահանգների նոր բաժանումը», «Յառաջ», 1920, թիվ 126, էջ 2: Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2008, էջ 106-107:

Խորհրդային Հայաստանի նոր իշխանությունները փոփոխություններ կատարեցին հանրապետության վարչական կառուցվածքում: ՆԳ ժողկոմի 1920 թ. դեկտեմբերի 13-ի հրամանով վերացվեցին նախկին նահանգապետությունները և քաղաքային ինքնավարությունները: 1921 թ. հուլիսի 20-ի ՀԽՍՀ ժողկոմխորհի դեկրետով՝ հանրապետության տարածքը բաժանվեց 8 գավառի՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր Բայազետի և Դարալագյազի, հետո դրանց ավելացավ նաև խորհրդայնացված Զանգեզուրը[3]: Հետագա տարիներին վարչական բաժանումները և փոփոխությունները շարունակվեցին:

Հայաստանի վարչատարածքային միավորների՝ Շիրակի և Վանանդի (Կարսի) նահանգներում կատարված դեպքերը քննարկվել են 1920-1921 թթ. ժամանակահատվածում, երբ քեմալականների կողմից այդ տարածքները ռազմակալվեցին և նրանց ճակատագիրը վճռվեց 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով: Վանանդի նահանգը 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ռազմական գործողությունների հետևանքով քեմալականների կողմից ռազմակալվել էր և մինչև Կարսի պայմանագրի կնքումը վերջնականապես հայաթափվել՝ հետագայում բռնակցվելով թուրքական պետությանը:

Շիրակի նահանգի Ալեքսանդրապոլի գավառն ամբողջությամբ և Ղարաքիլիսայի գավառի մի հատվածը 1920 թ. նոյեմբերի սկզբներից մինչև նոյեմբերի 18-ը գրավվեց և ռազմակալվեց թուրքերի կողմից: Թուրքական զորքն այդտեղ մնաց մինչև 1921 թ. ապրիլի 23-ը[4]: 1920 թ. նոյեմբերի 18-ին նահանգի մի մասի վրա ձևավորվեց թուրք-հայկական զորքերի «չեզոք գոտին», որը վերացվեց 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո[5]: Ատենախոսության վերնագրում Վանանդի և Շիրակի նահանգների հիշատակումը պայմանավորված է վերը նշված հանգամանքներով:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ատենախոսության շարադրման ընթացքում կիրառվել են պատմանկարագրողական, պատմահամեմատական, պատմաքննական և պատմական-համակարգային վերլուծության մեթոդները: Վերջինիս կիրառմամբ իրականացվել է Հայաստանի առաջին հանրապետության Վանանդի (Կարսի) և Շիրակի նահանգներում 1920 թ. տեղի ունեցած հայերի կոտորածների հանգամանքների ուսումնասիրումը, փաստերի հավաքում և համակարգում, որն էլ հնարավորություն է ընձեռել առանձնացնել յուրաքանչյուր իրադարձության նախապատրաստման, մեկնարկի, ընթացքի և հետևանքների հիմնական առանձնահատկությունները: Ուսումնասիրության ընթացքում կատարվել են նաև դաշտային աշխատանքներ, մասնավորապես խնդրո առարկա դեպքերի հետ կապված

---

[3] Նույն տեղում, էջ 110, Տե՛ս նաև Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Երևան, «Զանգակ-97», 2007, էջ 143-144:

[4] Տե՛ս Աբրահամյան Հ., Ալեքսանդրապոլի իրադարձությունների շուրջ (1920 թ. նոյեմբեր-1921 թ. ապրիլ), «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), թիվ 2, 2007, էջ 132:

[5] Տե՛ս Սարդարյան Կ., Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում, «Գարուն», թիվ 4, 1990, էջ 43: Տե՛ս նաև Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, էջ 114-115:

զրույցներ, հարցազրույցներ են անցկացվել դեպքերի ականատեսների ինչպես նաև նրանց ժառանգների հետ:

Ականատես-վերապրողների և նրանց ժառանգների պատմածները համեմատվել-համադրվել են այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ և միայն չհակասման դեպքում են դրանք ներառվել ուսումնասիրության մեջ: Բացի այդ, թուրքական բանակի իրագործած զանգվածային կոտորածների տարածքի որոշ բնակավայրերում կատարվել են հողամաքրման աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերվել են հանցագործությունների հետքերը՝ կմախքներ, օսմանյան փամփուշտների պարկուճներ և այլն, որոնց լուսանկարները ներկայացված են աշխատության հավելվածներում:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՑԹԻ հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների և Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժինների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական հոդվածների տեսքով: Թեմայի վերաբերյալ գիտաժողովներում ներկայացվել են զեկուցումներ:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածությունը: Հիմնահարցը նախկինում ամբողջական և համակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել: Անվանի պատմաբան Մկրտիչ Ներսիսյանը հիմնահարցին անդրադարձել է հրապարակումների և անավարտ փաստաթղթերի և նյութերի ժողովածուի ձևով[6]: Ուշագրավ է թեմային լավատեղյակ հեղինակի կողմից քեմալականների հանցավոր գործողությունները որպես ցեղասպանություն որակելը[7]: Թեմային գիտավերլուծական հոդվածով անդրադարձել է նաև Կարեն Խաչատրյանը[8]: Ալեքսանդրապոլի գավառում 1918 և 1920-21 թթ. Թուրքիայի ցեղասպան քաղաքականության վերաբերյալ որոշակի ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցներ

---

[6] Ներսիսյան Մ., Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005:

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 124, նաև Ներսիսյան Մ., Քեմալական զորքերի բարբարոսությունները Արևելյան Հայաստանում 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբներին, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), թիվ 1-2, 1998, էջ 247-256:

[8] Տե՛ս Խաչատրյան Կ., Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը 1920-1923 թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, թիվ 4, 2001, էջ 13-20:

Կարինե Ալեքսանյանի[9], Արմեն Հայրապետյանի[10] և Կարինե Բազեյանի[11] կողմից, որոնք օգտագործվել են սույն ուսումնասիրության կատարման ընթացքում: Հետազոտությունը կատարվել է ժամանակի մամուլի, Հայաստանի ազգային արխիվի, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հմնադրամի գիտական ֆոնդերի, բանահավաքչական-դաշտային աշխատանքների, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ առկա նյութերի ուսումնասիրության և համադրման միջոցով:
Ատենախոսության աղբյուրագիտական հենքն են կազմում Հայաստանի Ազգային արխիվի տարբեր ֆոնդերի նյութերը[12], Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված Հայոց ցեղասպանության փաստաթղթերի ժողովածուների[13], Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտի փաստաթղթերի ժողովածուի[14] փաստաթղթերը և այլն: Ուսումնասիրվել են նաև հատուկ հանձնաժողովների կողմից Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառներում կատարված աշխատանքները՝ ինչպես թուրքական ռազմակալման ընթացքում, այնպես էլ դրանից հետո, որոնք ունեն աղբյուրագիտական նշանակություն[15]:

---

[9] Տե՛ս Ալեքսանյան Կ., Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում, «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ «ԲՀԱ»), թիվ 1, 2005, էջ 18-25, նույնի՝ Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում, «ԲՀԱ», թիվ 2, 2009, էջ 123-143, նույնի՝ Ալեքսանդրապոլի գաւառը 1920 ի թուրք-հայկական պատերազմի նախօրեակին, Հայկազեան Հայագիտական հանդէս, հատոր ԼԲ, Պէյրութ, 2012, էջ 377- 405, նույնի՝ Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի գործունեությունն Ալեքսանդրապոլի գավառում 1919-1921 թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», թիվ 21, 2018, էջ 128-135:

[10] Հայրապետյան Ա., Օսմանյան ցեղասպանական քաղաքականության շարունակությունը Ղարաքիլիսայի շրջանում (1918 թ. մայիս-հոկտեմբեր), Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Միջազգային գիտաժողով նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին և Վանաձորի պետական համալսարանի (Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի) հիմնադրման 50-ամյակին, Երևան, 2019, էջ 254-262:

[11] Տե՛ս Բազեյան Կ., 1918-1921 թթ. իրողությունները շիրակցիների բանավոր հիշողության մեջ. Նյութերի ժողովածու, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2023:

[12] Մասնավորապես՝ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 114 «ՀՍԽՀ արտաքին գործերի նախարարության ֆոնդ», ֆ. 200 «Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարության ֆոնդ», ֆ. 201 «Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործերի նախարարության ֆոնդ», ֆ. 205 «ՀՀ Խնամատարության և աշխատանքի նախարարության ֆոնդ», ֆ. 240 «Պարսամյան Վարդան Արամի, պատմաբան, դոկտոր-պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ֆոնդ»:

[13] Տե՛ս Ներսիսյան Մ., Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (խմբ. Մ.Գ. Ներսիսյան, կազմ.՝ Մ.Գ Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան), Երևան, «Հայաստան» հրատ., 1991 :

[14] Տե՛ս Դալլաքյան Վ., Մարուքյան Ա., Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) Երևան, ԵՊՀ հրատ., 2008:

[15] Տե՛ս ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43:

Նախկին Շիրակի նահանգի տարածքում՝ Ղարաքիլիսայի գավառի հատվածներից մեկում (Նալբանդի շրջան, Փամբակի արևմտյան հատված), որտեղ թուրքական զորքերը 1920 թ. իրագործել են խաղաղ բնակչության զանգվածային կոտորածներ, կատարվել են ազգագրական և բանահավաքչական դաշտային հետազոտություններ ու դիտարկումներ, որոնք հետազոտողի կողմից սկսվել են դեռևս 2007 թ.-ից և շարունակվում են մինչ օրս: Հիմնական բանախոսներն ականատես-վերապրածների ժառանգներն են՝ առաջին և երկրորդ սերնդի ներկայացուցիչները: Աշխատանքում որպես բանասացի խոսք բերվում են սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող վերապրողների և ականատեսների հաղորդած տեղեկությունները, որոնք հանդիսանում են տվյալ ընտանիքի (գերդաստանի) սերնդեսերունդ փոխանցվող հավաքական հիշողության դրվագներ: Այս կերպ ընթերցողի համար ավելի տեսանելի է դառնում բանավոր պատմության սկզբնաղբյուրային արժեքը: Վկայությունների մեծ մասը ձայնագրվել են, գրի առնվել և պահվում են հետազոտողի անձնական արխիվում :

Դաշտային աշխատանքներն իրականացվել են թուրքական զորքի վայրագություններից առավելապես տուժած նախկին Ղարաքիլիսայի գավառի Փամբակի՝ Ղալթախչի (այժմ Հարթագյուղ՝ Լոռու մարզում), Ղարաբոյա (այժմ Խնկոյան՝ Լոռու մարզում), Աղբուլաղ (այժմ Լուսաղբյուր՝ Լոռու մարզում), Ավդիբեկ (այժմ Ծաղկաբեր՝ Լոռու մարզում), Նալբանդ (այժմ Շիրակամուտ՝ Լոռու մարզում) գյուղերում: 1920 թ. Կարսի նահանգից վերոնշյալ գյուղերում հաստատված գաղթականների ժառանգների հետ նույնպես իրականացվել են հարցազրույցներ, գրի առնված պատմությունները օգտագործվել են հետազոտության մեջ: Փամբակի տարածքում կատարված ազգագրական, բանահավաքչական ուսումնասիրությունները վերահաստատում են, լրացուցիչ տեղեկություններով ամբողջականացնում են տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները:

Բանահավաքչությունից բացի, իրականացվել են հողամաքրման աշխատանքներ թուրքական զորքի կողմից 1920 թ. կոտորածի ենթարկված՝ Փամբակի Ղալթախչի գյուղի տներից մեկում, ինչի արդյունքում հայտնաբերվել են թուրքական փամփուշտներ, պարկուճներ, տարբեր մասունքներ: Հայտնաբերված նյութերը համալրել են հեղինակի անձնական արխիվի հավաքածուն, իսկ մի մասը նվիրաբերվել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին [16] : Հողային, շինարարական աշխատանքների ընթացքում նաև վերոնշյալ գյուղի ուրիշ թաղամասերից այլ նյութեր էլ են հայտնաբերվել, որոնք ի պահ են հանձնվել հետազոտողին:

2020 թ-ից դիտարկումներ և բանահավաքչական աշխատանքներ են կատարվել նաև նախկին Ալեքսանդրապոլի գավառի 1-ին գավառամասի առավել շատ տուժած՝ Մեծ Քափանակ (այժմ Բասեն՝ Շիրակի մարզում), Փոքր Քափանակ (այժմ Հովիտ՝ Շիրակի մարզում), Հաջի Նազար (այժմ Կամո՝ Շիրակի մարզում) գյուղերում: Հավաքագրված պատմությունները օգտագործվել են նշված աշխատանքում:

[16] Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ (այսուհետև՝ ՀՑԹԻ) գիտական ֆոնդեր, բաժին 64, ֆ. 286, 287:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 170 էջ:

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում է հետազոտության առարկան, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և տարածքային շրջանակը, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, վերլուծվում է հետազոտական թեմայի աղբյուրագիտական հիմքը, գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին՝ **«Վանանդի նահանգի հայ բնակչության զանգվածային կոտորածները թուրքական բանակի կողմից 1920-1921 թթ.»** գլխում ներկայացված է 1919-1920 թթ. Կարսի մարզի տարածք հայության վերադարձի, 1920-1921 թթ. Կարս քաղաքի հայ բնակչության կոտորածների ու թալանի, թուրքական զորքերի կողմից Վանանդի (Կարսի) նահանգի բնակավայրերի հայաթափման պատմությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը բացի տեղացիների վերադարձից, սկսեց նաև Կարսի մարզը արևմտահայերով վերաբնակեցնելու քաղաքականությունը: Ալեքսանդրապոլից, Նոր Բայազետից, Թիֆլիսից և Բաթումից Կարսի նահանգ էին տեղափոխվում գարահիսարցիներ, բայբուրդցիներ, բասենցիներ, մշեցիներ, կարնեցիներ, դերջանցիներ և այլք[17]: Գաղթականների տեղափոխություն էր տեղի ունենում նաև Ղարաքիլիսայից, Դիլիջանից և Բաքվից[18]: Քեմալական արշավանքի հետևանքով նորից սկսվեց կոտորածը, գաղթը և տեղահանությունը: Մեծ եղեռնից հետո այստեղ հաստատված արևմտահայության համար սա փաստորեն կրկնակի ցեղասպանություն էր:

Ատենախոսության երկրորդ՝ **«Թուրքական բանակի իրագործած զանգվածային կոտորածները Շիրակի նահանգում 1920-1921 թթ.»** գլխում առանձին ենթագլուխներով ներկայացված են՝ 1920-1921 թթ. Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների տարածքում տեղի ունեցած զանգվածային կոտորածները: Շիրակի նահանգում քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածների առավել հայտնի վայրը՝ Հզազի ձորն է, որը զանգվածային կոտորածներից հետո ստացել է «Ջարդի ձոր» անվանումը: Այն գտնվում է Ջաջուռի լեռնանցքում՝ Լուսաղբյուր (Լոռու մարզում) և Ջաջուռ (Շիրակի մարզում) գյուղերի միջև: Ջաջուռի լեռնանցքը (թամքոց) Շիրակի դաշտը կապում է Փամբակի գոգավորությանը: Ձորի լանջերը զառիվեր են, դժվարամատչելի: 1952 մ բարձրության վրա գտնվող այս ձորում թուրքերը զանգվածաբար կոտորել են Շիրակի և Փամբակի բնակչության մի մասին: Թուրքական զորքը գյուղերից բռնի տեղահանել, ինչպես նաև խաբեությամբ, այստեղ է բերել բռնազավթված տարածաշրջանների բնակիչներին ու զանգվածաբար կոտորել: Շիրակի

[17] ՀԱԱ ֆ. 205, ց. 1, գ. 799, 2-րդ մաս, թ. 328, 329, 341:

[18] Նույն տեղում, 1-ին մաս, թ. 44, նույն տեղում, գ. 801, 2-րդ մաս, թ. 168, 171:

նահանգի տարբեր շրջաններում կատարված հետագա ուսումնասիրությունները փաստում են տարբեր ձորերում գազանաբար սպանված հազարավոր անմեղ մարդկանց մասին: Այդ ձորերից էին ոչ միայն վերն արդեն հիշատակված Հզազի կամ Ջարդի ձորը, այլ նաև Ղուզղունի ձորը[19] և Փամբակի տարածքում գտնվող Ղարաբոյայի (Խնկոյանի) ձորը:

Փամբակի տարածքի (Ղարաքիլիսայի գավառ) 1920 թ. կոտորածները հայ պատմաբանները հիմնականում ներկայացնում են Ալեքսանդրապոլի գավառի ջարդերի համատեքստում[20]: Տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունները (1920 թ. թուրք-հայկական պատերազմ) ներկայացնող քարտեզները նույնպես չեն արտահայտում իրական պատկերը. շատ դեպքերում բացակայում է Ղարաքիլիսայի գավառի նշումը, և թուրքական բանակի կողմից ռազմակալված Փամբակի տարածքի հիշյալ հատվածը տրվում է Ալեքսանդրապոլի գավառի կազմում[21]: Նման մոտեցման պատճառը թերևս այն է, որ Փամբակի տարածքը ժամանակին եղել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում, որպես այդ գավառի Առաջին տեղամաս, սակայն, կարծում ենք, որ ավելի ճիշտ է 1920 թ. դեպքերն ուսումնասիրել ըստ առանձին գավառների՝ հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի վարչատարածքային բաժանումները: 1918 թ. հոկտեմբերի 7-ի ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ Մեծ Ղարաքիլիսայի տեղամասը (Փամբակ) դուրս է գալիս Ալեքսանդրապոլի գավառի կազմից և միավորվելով Դիլիջանի և Քարվանսարայի (այժմ՝ Իջևան քաղաք Տավուշի մարզում) տեղամասերի հետ, դառնում նոր ձևավորված Դիլիջանի գավառի մաս[22]: Ղարաքիլիսայի գավառը կազմավորվել է 1919 թ. փետրվարի 26-ին ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ[23]: Նույն թվականի մայիսի 23-ի օրենքով Մեծ Ղարաքիլիսան (այժմ՝ Վանաձոր, Լոռու մարզի մարզկենտրոն) ստանում է քաղաքի կարգավիճակ: Այս գավառի մաս էին կազմում Փամբակի, Լոռու, Բորչալուի տեղամասերը[24]: Ինչպես արդեն նշվել է, 1920 թ. մայիսի 25-ին ՀՀ տարածքը բաժանվեց

---

[19] Ղուզղունի ձորը գտնվում է Զրախլի (Ջրառատ, Շիրակի մարզ) և Խանվալի (1946 թ. Ծաղկասար: 1960-ական թվականներից գյուղն ամայացել է (տեղափոխվել), ավերակները գտնվում են Ջրառատից հինգ կմ դեպի հյուսիս-արևելք) գյուղերի միջև:

[20] Խոսքը Ջաջուռի լեռնանցքից մինչև Նալբանդ կայարան ընկած տարածքի մասին է, որը Ղարաքիլիսայի գավառի Նալբանդի շրջանն էր:

[21] Տե՛ս օրինակ՝ Թուրք-հայկական պատերազմը (28.09-18.11.1920 թ.), Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2008, էջ 109: Քարտեզ՝ «Կարսի մարզ» ենթաբաժին՝ «Թուրք հայկական պատերազմը և հետևանքները 1920 թ.» (հեղինակ՝ Բաբկեն Հարությունյան) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ, «ԳԵՈՔԱՐՏ» ՊՈԱԿ 2015 թ.:

[22] Տե՛ս Հայրապետյան Ա., Օսմանյան ցեղասպանական քաղաքականության շարունակությունը Ղարաքիլիսայի շրջանում (1918 թ. մայիս-հոկտեմբեր), էջ 259:

[23] ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 181, թ. 8:

[24] Տե՛ս Քառյան Ս., Ղարաքիլիսայի գավառը 1919-1920 թվականներին, «ԼՀԳ», թիվ 2, 2004, էջ 212:

չորս նահանգի՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց, և Ղարաքիլիսայի գավառը մտնում էր Շիրակի նահանգի մեջ[25]:

1918 և 1920 թթ. թուրքական բանակի կողմից Փամբակի տարածքի բնակչությունը կրկնակի կոտորածների է ենթարկվել:

Ատենախոսության երրորդ՝ «Մեծ եղեռնի և 1920-1921 թթ թուրքական բանակի իրագործած հայերի զանգվածային կոտորածների համեմատական վերլուծություն» գլխում ներկայացված են՝ Մեծ եղեռնի և 1920-1921 թթ հայերի զանգվածային կոտորածների ընթացքում բանակը ներգրավելու թուրքական իշխանությունների ժառանգական գործելաոճի և Մեծ եղեռնի ու 1920-1921 թթ վերոնշյալ նահանգներում հայերի զանգվածային կոտորածներին թուրքական բանակի ներգրավածության առանձնահատկությունները:

Եզրակացություններում ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները և մեր կողմից արված եզրահանգումները·

- Այն ինչ կատարվեց 1920-1921 թթ. վերոնշյալ նահանգներում միջազգային իրավունքի նորմերի տեսակետից մարդկության դեմ ուղղված ցեղասպանական և պատերազմական հանցագործություններ էին: Քեմալականներն իրենց բնաջնջման քաղաքականությունն արդարացնելու նպատակով հայերին ներկայացնում էին որպես թշնամի, վերջիններիս դեմ պատերազմի սկզբից իրականացնելով ակտիվ քարոզչություն, այնուհետև հայ խաղաղ բնակչության շրջանում իրենց ներկայացնելով իբրև խաղաղասերներ: Համեմատելով Արևելյան Հայաստանում թուրքական ռազմուժի և իսլամադավան խառնամբոխի գործողություններն Արևմտյան Հայաստանի նահանգներում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում իրագործված Մեծ եղեռնի հետ, կարող ենք փաստել բազմաթիվ նմանություններ իրականացման ձևերի ու հետապնդած նպատակների միջև: 1920 թ. աշնանը, օգտվելով պատերազմական դրությունից՝ քեմալականներն իրագործում էին հայ խաղաղ բնակչության զանգվածային բնաջնջում, ճիշտ այնպես, ինչպես Առաջին աշխարհամարտի ընթացքում դա կատարվում էր երիտթուրքերի վարչակարգի կողմից: Հայ խաղաղ բնակչության զանգվածային կոտորածներն իրագործվում էին ամենայն դաժանությամբ՝ խոշտանգումներ, ողջակիզումներ և այլն: Որոշ դեպքերում բռնությունները ծիսականացվել են: Սպանվածների դիերը ենթարկվել են անարգանքի, ինչը խոսուն ապացույց է հանցագործների մեջ արմատավորված ատելության և թշնամանքի: Այս գործողություններից ակնհայտ էր նպատակը՝ «ոչնչացնելով բնակչությանը, տիրանալ նրանց հայրենիքին»:
- Քեմալականների կատարած զանգվածային կոտորածները Վանանդի (Կարսի) նահանգում, մասնավորապես Կարս քաղաքում, Շիրակի նահանգի՝ Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառներում, թուրքական պետության ցեղասպան հանցավոր քաղաքականության հետևողական շարունակությունն էր: Թուրքերը կոտորում էին գրավյալ և ռազմակալված տարածքների հայ խաղաղ բնակչությանը, նրանց մի մասին դարձնում տարագիր: Թուրքական զորքերի 1920 թ. արշավանքի և ցեղասպան

[25] Տե՛ս «Հայաստանի նահանգների նոր բաժանումը», «Յառաջ», թիվ 126, 1920, էջ 2: Քառյան Ս., նշվ. աշխ., էջ 212:

գործողությունների հետևանքով Վանանդի (Կարսի) նահանգը հայաթափվեց, ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ բնակչության զգալի մասը դիմեց փախուստի, իսկ իրենց տներում մնացած քիչ մասը բռնությամբ տեղահանվեց:

- Շիրակի նահանգը (Ալեքսանդրապոլի գավառ, Ղարաքիլիսայի գավառի մի հատված) նույնպես կրեց մարդկային և նյութական անդառնալի կորուստներ: Թուրքական գործողությունների հետևանքով վերոհիշյալ գավառների բնակչությունը կրեց բազմաթիվ զրկանքներ և ենթարկվեց ֆիզիկական և հոգեկան տառապանքների:
- Օգտվելով բնակչության անպաշտպան վիճակից թուրքական զինվորներն ու սպաները սեռական բռնությունների ենթարկեցին հայ կանանց և աղջիկներին: Չխնայվեցին նաև մանկահասակ երեխաները և ծեր կանայք: Հանցագործությունից տուժած անձանց նկատմամբ այդ գործողություններն իրականացվեցին ինչպես պատերազմական գործողությունների ընթացքում, այնպես էլ դրանցից հետո: Այս զազրելի գործողությունների հետևանքով խեղվեց վերոհիշյալ նահանգների ժողովրդագրական պատկերը:
- Ռազմական հանցագործություններից էին նաև հայ ռազմագերիների դիտավորյալ սպանությունները, նրանց նկատմամբ տարատեսակ բռնարարքները, հայ զինվորների մարմինների խեղումը և անարգումը:
- Զանգվածային կոտորածներն ուղեկցվում էին նաև սեփականության դեմ ուղղված հանցագործություններով, ինչի հետևանքով քեմալական զորքի և խուժանի կողմից թալանվեցին և կողոպտվեցին ինչպես պետական սեփականություն հանդիսացող գույքը և շինությունները, այնպես էլ բնակչության մասնավոր սեփականություն հանդիսացող տները, գույքը, անասունները և այլն: Երբեմն թալանի և կողոպուտի նպատակով բնակչությունը ենթարկվում էր կրկնակի բռնությունների և կոտորածների:
- Իրականացվեց «մշակութային ցեղասպանություն», մասնավորապես Կարսի (Վանանդի) նահանգում: Ջարդարարները իրականացնում էին մշակութային ժառանգության ոչնչացում՝ կողոպուտ, վանդալիզմ և յուրացում (եկեղեցիների, մատուռների գործառույթի փոփոխում, իսլամացում, թյուրքացում): Համայնքների տեղահանության հետևանքով, տեղի ունեցավ նաև ոչ նյութական արժեքների կորուստ: Գործի դնելով «մշակութային ցեղասպանության» քաղաքականությունը քեմալականները շարունակեցին և գրեթե ավարտին հասցրեցին իրենց նախորդների այսօրինակ քաղաքականությունը, որն իր մեջ ներառում էր հայկական հետքի իսպառ վերացում հայերի հայրենիքից: Այս ամենին զուգահեռ շատ արագ իրականացվում էր հայկական բնակավայրերը մահմեդականներով բնակեցնելու գործընթացը:
- Շիրակի նահանգի եկեղեցիները նույնպես ենթարկվեցին վանդալիզմի, ավելին նրանք օգտագործվեցին որպես հայ խաղաղ բնակչության՝ հատկապես կանանց և երեխաների հավաքատեղի, որտեղ վերջիններիս ողջակիզում և կոտորում էին:
- 1920-1921 թթ. Արևելյան Հայաստանում թուրքերի կատարած ոճրագործությունները համապատասխանում են ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվեցիայի հետևյալ դրույթներին՝ ա. խմբի անդամների սպանելը, բ. խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեբանական վնաս պատճառելը, գ. կենսագործունեության հետ անհամատեղելի պայմանների ստեղծում՝ նպատակ

ունենալով նրա ամբողջական կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը: Հայ ժողովրդի մի հատվածը սեփական հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում ենթարկվեց ոչնչացման, նրանց մեջ մեծ թիվ էին կազմում նաև 1915 թ. Մեծ եղեռնից փրկված և Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում ապաստանած արևմտահայ գաղթականները, վերջիններս փաստորեն ենթարկվեցին կրկնակի ցեղասպանության, նրանց հասցվեցին ծանր մարմնական վնասվածքներ, պատճառվեց հոգեկան խեղում: Ստեղծվեցին կյանքի այնպիսի պայմաններ, որոնց արդյունքում բնակչությունը կանգնեց ֆիզիկական ոչնչացման եզրին:

- Թուրքական երեք վարչակարգերի՝ Աբդուլ Համիդի, երիտթուրքերի, քեմալականների քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ եղել է նույնաբովանդակ, մեկը մյուսից ժառանգելով, ավելի է կատարելագործել և հետևողականորեն շարունակել ցեղասպան այդ քաղաքականությունը: Թուրք-հայկական պատերազմը զավթողական, հայաջինջ պատերազմ էր, որի նպատակը Հայաստանի վերջնական ոչնչացումն էր: Թուրքիան նպատակ էր դրել վերացնել այն սեպը, որը բաժանում էր իրեն Ադրբեջանից: Այստեղ հարկ է դիտարկել նաև այն, որ պատերազմ նախաձեռնողը նախկին ցեղասպան պետության՝ Օսմանյան կայսրության իրավաժառանգորդն էր, որի գործելաոճը չէր փոխվել: Ուստի 1920 թ. Կարսի և Շիրակի նահանգների բնակչության զանգվածային կոտորածները պետք է դիտարկել որպես Հայոց ցեղասպանության շարունակություն, այդ հանցավոր քաղաքականության փուլերից մեկը:

Տվյալ հետազոտության շրջանակներում պատմական իրողությունների, փաստերի հիման վրա մեկ անգամ ևս արձանագրվեց, որ միայն պատմական հիշողության պահպանման, նրա գիտական ուսումնասիրության միջոցով է հնարավոր ճանաչումից հասնել հատուցման՝ ասպարեզ բերելով պահանջատիրության պատմական, իրավական հիմքերը ցեղասպանության հետևանքները հաղթահարելու նպատակով:

Ցեղասպանության յուրաքանչյուր շրջանի ուսումնասիրությունը ստիպում է զգոն լինել և դիմակայել նոր մարտահրավերներին, որոնցից մի քանիսին մենք ականատես եղանք՝ 2016 թ. Արցախյան ապրիլյան քառօրյա պատերազմի (ապրիլի 2-5), 2020 թ. Արցախյան 44-օրյա (սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) պատերազմի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի դեմ 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի զինված ուժերի ռազմական գործողությունների ժամանակ, որոնք ուղեկցվեցին հայ բնակչության նկատմամբ իրականացվող էթնիկ զտումներով: Ահաբեկչական գործողությունները, խաղաղ բնակչության խոշտանգումները, ողջ և սպանված մարդկանց գլխատումները և այլ հանցագործությունները դարձան այն իրողության ապացույցը, որ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներից և 1915-1923 թթ. ցեղասպան գործողություններից ի վեր թշնամու ձեռագիրը չի փոխվել: Այս առումով հարկավոր է ապավինել պատմական իրողությանը՝ տարբեր ժամանակներում ծրագրված հայասպանության փորձերից դասեր քաղելու հետևություններ անելու, նոր ռազմավարություն մշակելու համար:

Այսպիսով, թուրքական ռազմա-քաղաքական ղեկավարության վարած ցեղասպանական քաղաքականության հետևանքով Վանանդի նահանգը վերջնականապես հայաթափվեց, իսկ Շիրակի նահանգի բնակչությունը Խորհրդային

Հայաստանի կազմում փորձեց վերագտնել իր կենսունակությունը: Սա թուրքական կառավարության կողմից հայերի ոչ միայն ցեղասպանության, այլև հայրենազրկման հանցավոր քաղաքականության շարունակության հերթական դրսևորումն էր:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրատարակումները՝

1. Հախոյան Վ., Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների ընտանեկան հիշողությունների (1920-1921 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես», 2021, N 9(1) էջ 83-122:
2. Հախոյան Վ., Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գավառում (1920-1921 թթ.), «Հայագիտության հարցեր», 2021, N 3 (24) էջ 72-84:
3. Հախոյան Վ., Կարսի հայության կոտորածը 1920-1921 թթ., «Հայագիտության հարցեր», 2022, N 1 (25) էջ 109-125:
4. Հախոյան Վ., Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Ղարաքիլիսայի գավառում (1920-1921 թթ.), «Հայագիտության հարցեր», 2022, N 2 (26) էջ 113-127:
5. Hakhoyan V., Depopulation of Vanand (Kars) Province (1920-1921), «Պատմություն և մշակույթ», 2022, N 2 (18) էջ 83-93:
6. Հախոյեան Վ., Ալեքսանդրապոլի գաւառի 1920-21ի կոտորածները, «Հայկազեան հայագիտական հանդէս», 2023, N 43/1 էջ 409-424:

Ахоян Вазген Ваганович

МАССОВЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ, СОВЕРШЕННЫЕ ТУРЕЦКОЙ АРМИЕЙ В ВАНАНДСКОЙ (КАРССКОЙ) И ШИРАКСКОЙ ПРОВИНЦИЯХ (1920-1921 ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 20-го сентября 2024 г. в 13^{00} часов на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Основной целью данной диссертации является исследование и представление массовых преступлений, совершенных турецкой армией на суверенной территории Первой Республики Армения, в частности, в провинциях Ванада (Карс) и Ширака в 1920-1921 годах. Данная тема до сих пор полностью и всесторонне не изучалась. В исследовании рассматривается процесс возвращения армянского населения на территорию Карсской провинции в 1919-1920 гг., массовые убийства армянского населения города и его окрестностей турецкой армией после падения Карса, деарменизация провинции Ванад в результате нападения турецкой армии в 1920-1921 гг. Исследуются также массовые убийства в Ширакской провинции в 1920-1921 годах и массовые убийства на территории Каракилисского уезда в 1920-1921 гг, совершенные турецкой армией. Массовые убийства, организованные турецкой армией в провинциях Ванад и Ширак в 1920-1921 годах исследуются в контексте продолжения турецкими властями преступной политики Геноцида армян. Проведен сравнительный анализ между массовыми убийствами1920-1921 гг., устроенными турецкой армией в провинциях Ванад и Ширак и Геноцидом армян в западной Армении и других армянонаселенных территорий Османской империи, подчеркивая их общие черты и характеристики.

При написании диссертации использовались историко-описательный, историко-сравнительный методы и метод историко-системного анализа. Использованием последнего метода было осуществлено изучение обстоятельств массовых убийств армян в Ванандской (Карсской) и Ширакской губерниях в 1920 г., сбор и сопоставление фактов, что позволило выделить основные особенности подготовки, инициирования, осуществления и последствий этих преступлений. В ходе исследования также были проведены полевые работы, в частности, были проведены интервью с выжившими очевидцами и их потомками, в связи с уточением событий, произошедших в 1920-1921 годах.

Рассказы выживших очевидцев и их потомков были сравнены со сведениями, полученными из других источников и при их подтверждении или отсутствии противоречий это данные были включены в исследование. Кроме того, в некоторых населенных пунктах в районе массовых убийств, устроенных турецкой армией, были проведены работы по расчистке территории, в результате которых были обнаружены следы преступлений: скелеты, османские гильзы и т.д., фотографии которых представлены в приложениях диссертации.

Преступления, совершенные подразделениями турецкой армии на территории Восточной Армении в 1920-1921 годах, соответствуют следующим положениям Конвенции ООН о геноциде от 9 декабря 1948 года: а. убийство членов группы, б. Причинение серьезного физического или психологического вреда членам группы, в. создание условий, несовместимых с жизнедеятельностью, с целью ее полного или частичного физического уничтожения. Часть армянского народа была истреблена на своей родине, в Республике Армения. Среди них было большое количество беженцев из Западной Армении, переживших Геноцид армян 1915 года и нашедших убежище в северо-западных регионах Республики Армения. Были созданы такие условия жизни, в результате чего данное население оказалось на грани физического уничтожения.

HAKHOYAN VAZGEN VAHAN

THE MASS CRIMES COMMITTED BY THE TURKISH ARMY IN VANAND (KARS) AND SHIRAK PROVINCES (1920-1921)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The Defense of the Dissertation will be held on September 20, 2024, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The main goal of the dissertation is to study and present the mass crimes committed by the Turkish army in the sovereign territory of the First Republic of Armenia in Vanand (Kars) and Shirak provinces in 1920-1921. The fundamental issue has not been fully and comprehensively studied yet. The research studies the return process of the Armenian population to the territory of Kars province in 1919-1920. After the fall of Kars, the massacres of the Armenian population of the city and its surroundings by the Turkish army. The depopulation of Vanand province as a result of the attack of the Turkish army in 1920-1921. The massacres carried out by the Turkish army in Alexandropol province in 1920-1921 are being studied. The execution of massacres by the Turkish army in the territory of Gharakilisa province in 1920-1921 is presented.

The massacres organized by the Turkish army in 1920-1921 in the provinces of Vanand and Shirak are discussed in the context of the continuation of the Armenian Genocide. A comparative analysis is made between the massacres carried out by the Turkish army in the provinces of Vanand and Shirak in 1920-1921 and the Armenian Genocide, highlighting their commonalities and characteristics.

Historical descriptive, historical comparative, historiographical and historical systematic analysis methods were used in the dissertation. By using these methods, the investigation of

the circumstances of the massacres of Armenians carried out in Vanand (Kars) and Shirak provinces in 1920, the collection and coordination of facts were carried out, which makes it possible to distinguish the main features of the preparation, start, process and consequences of each event. During the study, field work was also carried out, in particular, interviews were conducted with the descendants of the eyewitnesses of the cases.

The stories of generations of eyewitnesses-survivors were compared and combined with the information obtained from other sources and were included in the study if they did not contradict. In addition, land clearing works were carried out in some settlements of the area of mass massacres carried out by the Turkish army, as a result of which traces of crimes were found: skeletons, Ottoman bullet shells, etc., the photos of which are presented in the appendices of the work.

The crimes committed by the Turks in Eastern Armenia in 1920-1921 correspond to the UN Convention on Genocide to the following provisions of the convention of 1948 December 9: a. killing group members, b. causing serious physical or psychological harm to members of the group, c. creating conditions incompatible with life, with the aim of its complete or partial physical destruction. A part of the Armenian people was exterminated in their own homeland, in the Republic of Armenia, a large number of them were also the Western Armenian emigrants who survived the Genocide in 1915 and took refuge in the northwestern regions of Armenia, the latter were in fact subjected to genocide twice, they were inflicted with severe physical injuries and suffered mental mutilation. Such living conditions were created, as a result of which the population stood on the verge of physical destruction.